Հավելված

ՀՀ կառավարության 2009թվականի
.......................... ...........ի..
N ..........Ն որոշման

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ




* Ծանոթագրություն

① արդյունաբերության, ընդերքօգտ.

և այլ .... 0.5 հա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 14.10.08 թ. N 803-Ա որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի.

Հանձնաժողովը 2008 թվականի դեկտեմբերի 2-ի նիստում քննարկելով Արմավիր մարզի Արմավիր (ք.) համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարվող փոփոխությունների վերաբերյալ նյութերը, առաջարկում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ֆ. Եգորյան

անդամներ՝ Ռ. Ալավերդյան
Ս. Պապյան
Ս. Գալստյան
Գ. Գյուրջյան
Լ. Շահվերդյան
Ֆ. Բաշոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

«28» 11 2008 թ.

N 3143

Աս/ 1414

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Տերտերյան*

Ձեր համաձայնեցմանն են ներկայացվում նյութեր ՀՀ Արմավիրի մարզի Արաքս /Էջմ./ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայի փոփոխության վերաբերյալ:

*ՄԱՐԶՊԵՏ* Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

*Կատ՝ Ա. Դարբինյան*
*հեռ. 6-32-05*

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.01.2001թ. թիվ 30 որոշմամբ, ՀՀ Արմավիրի մարզպետի 05.02.2007թ. թիվ 10 կարգադրությամբ և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս /Էջմ./ համայնքի ավագանու 04.11.2008թ. թիվ 7 նիստի որոշմամբ, հավանություն տալ Արաքս համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ հաստատված ՀՀ կառավարության 14.04.2004թ. թիվ 508-Ն որոշման մեջ փոփոխություն կատարել և համայնքի վարչատարածքում գտնվող սեփականատեր Գագիկ Ալբերտի Պողոսյանի /ծածկագիրը՝ 106-008/ 1.97 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքից 0.5 հա-ը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի:

***Հանձնաժողովի նախագահ՝***

Ա. Ղահրամանյան - ՀՀ Արմավիրի մարզպետ

***Անդամներ՝***

Ա. Այվազյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Կ. Դանիելյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար

Ա. Դարբինյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ

Յու.Մանվելյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար

# Քաղվածք

Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածքի Արաքս համայնքի ավագանու 04 11 08թ. թիվ 7 նիստի 3 կետի որոշման արձանագրությունից

Նախագահությամբ՝ Ա. Միքաելյան
Քարտուղար՝ Ս. Բաբայան

## Օրակարգում

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություններ կատարելու մասին
Հանձին: - Արաքս համայնքի հողերի օգտագործմա ժամանակավոր սխեմքայնում հաստատված ՀՀ կառավարության 14 04 04 թիվ 508 Ն որոշմամաբ. փոփոխություն կատարել և համայնքի վարչատարածքում գտնվող սեփականատեր Գագիկ Ալբերտի Պողոսյանի 106-008 ծածկագրի 1,97 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքից 0,5 հա ձոխադրել արդյունաբերության, ընդհանուր օգտագործման և այլ արտադրական նշանակության:
Որոշեցին . Արաքս համայնքի հողերի օգտագործման ժամանակվոր սխեմայում հաստատված ՀՀ կառավարության 14 04 04 թիվ 5008 Ն որոշմամբ փոփոխություն կատարել և համայնքի վարչատարածքում գտնվող սեփականատեր Գագիկ Ալբերտի Պողոսյանի 106-008 ծածկագրի 1,97 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից 0,5 հա փոխադրել արդյունաբերական, ընդհանուր օգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի :

Նախագահ Ա. Միքաելյան

Քարտուղար Ս. Բաբայան

# Բացատրագիր

ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածքաշրջանի Արաքս համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հաստատված 14 04 04 թիվ 508 " որոշման մեջ փոփոխություններ կատարել և համայնքի սեփականատեր Գագիկ Պողոսյանի 106-008 ծածկագրի 1,97 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքից 0,5 հա փոխադրել արդյունաբերության ընդհանուր օգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր: Սեփականատերը նպատակ ունի 0 ,5 հա կառուցել սառնարան և ջերմատներ : Որոնք նախատեսված են գյուղատնտեսական մթերքների արտադրման , պահեստավորման , պահպանման և այլնի համար , որի կարիքը համայնքում կա : Մանրամասն ներկայացված է բիզնես ծրագրում:

Արաքս համայնքի ղեկավար՝ Ա. Միքանյան

Հողի նպատակային օգտագործման վերաբերյալ աշխատանքային ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրված է՝

ա/ Իրականացնել թարմ բանջարեղենի և կանաչեղենի արտադրություն.

1. կառուցել բանջարեղենի և կանաչեղենի մթերման համար նախատեսված սառնարանային շինություն
2. կառուցել թարմ բանջարեղենի և կանաչեղենի տեսակավորման և փաթեթավորման արտադրամաս ՀՀ և միջազգային սանիտարական նորմերին համապատասխան պայմաններով, ինչը թույլ կտա տեղական արտադրության գյուղմթերքն արտահանել ԵՄ անդամ երկրներ:
3. կառուցել բանջարեղենի երկարաժամկետ պահպանման համար նախատեսված սառնարանային պահեստ, ինչը թույլ կտա Արաքս և Ջրառատ համայնքների ֆերմերներին պահպանել իրենց արտադրության գյուղմթերքը:

բ/ Զբաղվել էկոլոգիապես մաքուր գյուղմթերքի արտադրությամբ և գիտահետազոտական աշխատանքներով.

1. կառուցել փորձարարական նշանակության ջերմատներ էկոլոգիապես մաքուր գյուղմթերք արտադրելու նոր մեթոդների ուսումնասիրման համար
2. կառուցել լաբորատորիա բանջարեղենի հայկական տեսակների սերմերի պահպանման, վերականգնման և արտադրության համար

Վերոհիշյալի արդյունքում նախատեսվում է մինչև 2009թ ավարտը ապահովել մոտ 50 աշխատատեղ Արաքս համայնքից՝ միջինում ամսեկան 80 հազ. դրամ աշխատավարձով, իսկ հեռանկարային զարգացման ծրագրերի կտրվածքով աշխատատեղերի թիվը հասցնել մինչև 120:

Գ. Պողոսյան
01.11.08թ.

14.12.08

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության գործակալության պետ
պրն Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

## Տեղազննման եզրակացություն

Ուսումնասիրել եմ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի Արաքս համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հաստատված, համայնքի սեփականատեր Գագիկ Պողոսյանի 1,97 հա հողատարածքից 0,5 հա արդյունաբերության ընդհանուր օգտագործման և այլ արտադրական նշանակության փոխադրվող հողատարածքը:

Տեղազննումից պարզվեց, որ գյուղից մոտ 1 կմ արևմուտք գտնվող վերոնշյալ 0,5 հա հողամասում պատմամշակութային հուշարձաններ չկան:

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության գործակալության Արմավիրի
և Արարատի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ` Կ. ԲԱՅՐԱՄՅԱՆ

ՀՀ մշակույթի նախարարության
... պատմության և
մշակույթի հուշարձանների
պահպանության գործակալություն
Մուտք 542
"23" 12 2008 թ.

Արաքս Համայնքի համայնքապետ
Ավագ Միքայելյանին ՀՀ
քաղաքացի Գագիկ Պողոսյանից

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ Ձեզ տալ համաձայնություն իմ սեփական 1.97 հա հողատարածքից 0.5 հա դարձնել արտադրական նշանակության՝ գյուղմթերք արտադրելու համար:

Դիմող՝ Գ.Պողոսյան

01.11.08թ.